ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА

Բնական գիտություններ 1, 2005 Естественные науки

Աշխարհագրություն

УДК 551.24:39

Ռ. Խ. ԳԱԳԻՆՅԱՆ

ՔԱՐՈԼՈՐՏԱՅԻՆ ՍԱԼԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԳՈՏԻՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԷԹՆՈԳԵՆԵԶԻ ԵՎ ՊԱՍԻՈՆԱՐԱՅԻՆ ԴԱՇՏԵՐԻ ԶՈՆԱՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԱԿ (ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

Քարոլորտային սալերի շփման շրջաններում է տեղաբաշխված ակտիվ խորքային խզվածքների գերակշռող մասը: Այդ խզվածքների տեղամասերում բացահայտվել են երկրակեղևի բարձր լարվածությամբ և թափանցելիությամբ վերահսկվող տարասեռ երկրաբանական զոնաներ, որտեղ ի հայտ են գալիս անոմալ կենսաբանական դրսևորումներ [1]: Այստեղ փոփոխվում են շրջակա միջավայրի երկրաֆիզիկական պարամետրերը՝ երկրամագնիսական դաշտը, գրունտի էլեկտրահաղորդականությունը, մթնոլորտի էլեկտրական պոտենցիալը, ռադիոակտիվության մակարդակը և այլն [2]: Այսպիսի տեղամասերը կոչվում են գեոպաթոգեն զոնաներ, որոնք, իբրև Երկրի միջուկի ճառագայթման պրոյեկցիաներ նրա մակերևույթի վրա, հանդիսանում են Երկրի էներգետիկ դաշտի ինֆրակառուցվածքի դրսևորումը [3]:

Խորքային խզվածքների զոնաների համընկնումը երկրաֆիզիկական և երկրաքիմիական անոմալիաների տեղամասերի հետ հայտնի է վաղուց: Այդ խզվածքների՝ որպես երկրակեղևի թուլացած զոնաների միջով է տեղի ունենում էներգիայի արտահոսքը Երկրի ընդերքից: Որպես կանոն՝ այդ տեղամասերը ազդում են կենսաբանական օբյեկտների վրա: Մարդկանց վրա դրանց բացասական ազդեցությունը ապացուցված է հավաստի վիճակագրական տվյալներով [1, 4]: Սակայն գեոպաթոգեն զոնաները ունենում են ոչ միայն բացասական, այլև դրական ազդեցություն, ինչը կարող է խթանել մարդու էվոլյուցիան: Բացահայտվել է մի կողմից՝ կուլտուրական բույսերի բազմազան տեսակների կենտրոնների ու հնագույն քաղաքակրթությունների (էթնոսների), մյուս կողմից՝ քարոլորտային սալերի շփման շրջաններում առկա սպրեդինգի (սալատարաշարժ) ու սուբդուկցիայի (սալաենթաշարժ) գոտիներում զարգացող ակտիվ խորքային խզվածքների ու բարձր ճառագայթման զոնաների միջև եղած փոխադարձ կապը: Մարդը երևան է եկել այդպիսի խոշորագույն խզվածքային կառույցներից մեկի՝ Արևելաաֆրիկյան մայրցամաքային ռիֆտի սահմաններում: Առաջին հողագործական քաղաքակրթություն-

ները՝ Բաբելոն, Եգիպտոս, Հունաստան, Իսրայել, Հնդկաստան, Չինաստան և այլն, նույնպես ձևավորվել են քարոլորտային սալերի սահմանային շրջաններում: Այս ամենը հիմք է տալիս ենթադրելու պասիոնարային դաշտերի և էթնոգենեզի զոնաների երկրաբանական բնույթը, որոնք, ըստ Լ. Գումիլյովի [5], հանդիսանում են էթնիկական սուբստրատի բաղադրիչները և պայմանավորում մարդկության զարգացման գլխավոր էթնիկական օրինաչափությունները: Ըստ նրա, մարդկության ակտիվության օջախների զարգացման զոնաները անցնում են բոլոր լանդշաֆտային արգելքների միջով: Հենց այդպիսի հատկանիշներ ունեն քարոլորտային սալերի շփման զոնաներում գտնվող ակտիվ խզվածքային համակարգերը: Հանդիսանալով երկրակեղևի էներգաակտիվ կառույցներ՝ դրանք մարդկանց վրա ունենում են խիստ հոգեպաթոգեն ազդեցություն՝ նրանց վարքագծում առաջացնելով փոփոխություններ:

Էթնոգենեզի զոնայի ձևավորման ժամանակակից օրինակ է հանդիսանում քարոլորտային մի շարք սալերի սահմանային զոնաներում գտնվող մոտ 10000*կմ* երկարությամբ և 100–300*կմ* լայնությամբ ձգվող Ալպ-Հիմալայան գոտու ակտիվ խզվածքների տարածման շրջանը: Այդ տարածաշրջանի տարբեր ազգային, պետական և կրոնական պատկանելություն ունեցող բնակչությանը ներկայումս էլ բնորոշ է ագրեսիվ ակտիվությունը: Այս գոտում են գտնվում Եվրասիայի սահմաններում տեղի ունեցող խոշոր հակամարտությունների շրջանները. Բոսնիա, Կոսովո, Աբխազիա, Հարավային Օսեթիա, Չեչնիա, Արցախ, Քուրդիստան, Տաջիկստան, Աֆղանստան, Քաշմիր, Կամբոջա, Վիետնամ: Որպես կանոն՝ այդ հակամարտություններն ուղեկցվել են որոշ չափով տեղաշարժված սեյսմոտեկտոնական ակտիվությամբ: Շրջակա միջավայրի էներգետիկ, երկրաֆիզիկական և երկրաքիմիական դաշտերի փոփոխությունները հանգեցրին «շարժառիթի և հակազդեցության միջև պատճառային կապերի խախտմանը»՝ արտահայտված «արտաքինից չհիմնավորված անկանխատեսելի վարվելակերպային հակազդեցության ծագմամբ», որոնք համարվում են ենթագիտակցական մակարդակի վրա ազդող գաղտնի օջախներ [6]: Արդյունքում դա մարդկանց գիտակցության մեջ առաջացնում է շրջապատի գործողությունների նկատմամբ համարժեք արձագանքման անկում: Դրա հետևանքով առաջանում են հոգեկան լարվածություններ, որոնք նվազում կամ վերանում են միայն երկրակեղևի երկրադինամիկական լարվածության պարպումից որոշ ժամանակ անց [1]: Հետևաբար, միջազգային հիմնախնդիրների կարգավորման մոդելների ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել նաև երկրաբանական գործոնը [7]:

Լ. Գումիլյովի կողմից առանձնացված էթնոգոնեզի 9 զոնաներից երկուսը մասամբ, իսկ մեկն ամբողջությամբ, ընկած են Ալպ-Հիմալայան սուբդուկցիայի գոտու տարածքում: Երկուսը ձգվում են միջօրեականի ուղղությամբ՝ ընդգրկելով Աֆրիկյան և Արաբական սալերի միջև ընկած Մեռյալ ծովի տրանսֆորմ խզվածքի հյուսիսային հատվածը , որտեղ էլ մ.թ.ա. 18-րդ դարում ձևավորվեցին հիքսոսները: Խեթերը, ինչպես նաև հայերը ձևավորվեցին Անատոլիական և Պոնտական միկրոսալերի միջև ընկած Հյուսիսանատոլիական խզվածքի կենտրոնական հատվածում [8], իսկ ծայր արևմտյան մասում 14-րդ դարում հաստատվեցին նաև թուրք-օսմանները:

Մ.թ.ա. 8-րդ դարում էթնոգենեզի բռնկումներ տեղի ունեցան երրորդ զոնայում՝ զուգահեռականի ուղղությամբ ձգվող Ալպ-Հիմալայան գոտու ընդար-

ձակ տարածքի խզվածքային համակարգերի տարբեր տեղամասերում: Հարավային Ֆրանսիայում ձևավորվեցին գալլերը, Կենտրոնական Իտալիայում՝ հռոմեացիները, Միջին Հունաստանում՝ հելլենները, Փոքր Ասիայում՝ լիդիացիներն ու կիլիկիացիները, Իրանում՝ պարսիկները [5]: Այս պասիոնարային ցնցման հետ է կապված նաև հայկական էթնոսի ձևավորման երկրորդ փուլը՝ Արևելաանատոլիական խզվածքի հյուսիսային հատվածում [9]:

Եթե էթնոգենեզի զոնաների տեղադիրքը վերահսկվում է խորքային ակտիվ խզվածքների համակարգերով, ապա պասիոնարային դաշտերի տեղայնացումը որոշվում է տարբեր կարգի ակտիվ խզվածքների հատման ցանցով: Պասիոնարային դաշտերը էներգետիկ համակարգեր են [5], որոնք պայմանավորված են կենսաքիմիական էներգիայի ավելցուկով [10]: Պասիոնարային ցնցումները բնորոշվում են որոշակի պարբերականությամբ, որը կապված է տիեզերական ճառագայթների ներգործության հետ և կազմում է մոտ 676 տարի [5]: Այս ցիկլերը համընկնում են Գ. Մորոզովի մոլորակների դիմակայության 676-ամյա ցիկլի հետ [11]: Նա պարզել է, որ դիմակայությունից 60 տարի առաջ կտրուկ աճում է հոգեպաթոգեն ներգործությունը կենսաբանական օբյեկտների վրա: Դիմակայության հետ պասիոնարային ակտիվության աճի ժամանակային ինտերվալները կոռելյացվում են նաև այլ պարբերականություններով՝ Գ. Մորոզովի 1811-ամյա և Ջ. Էդդիի 567-ամյա [12] ցիկլերով: Կենսաբանական համակարգի, ինչպես նաև մարդու վրա հոգեպաթոգեն ներգործության ակտիվացման սկիզբը Ջ. Էդդին համարում է 1715 թ.-ը: Մինչդեռ, ինչպես մոլորակների պտտման, այնպես էլ դիմակայության տարբեր ցիկլերում իրականում գոյություն ունի փոխազդեցության և փոխպայմանավորվածության ավելի բարդ պատկեր: Դրանց ընդհանրացված բնութագիրը, միգուցե, կարելի է բացատրել արեգակնային համակարգի կենտրոնի տեղաշարժումով: Ուստի, քանի դեռ չեն բացահայտվել երկրատիեզերական գործոնի ավելի հստակ չափանիշներ, ստիպված ենք բավարարվել վերոհիշյալ բացատրություններով, միաժամանակ պասիոնարության և էթնոգենեզի տարածաժամանակային էվոլյուցիայի մեջ երկրատիեզերական գործոնի հոգեպաթոգեն ներգործության պարբերականությունը դիտելով որպես գործիք:

Բնական է, որ վերը նշված էթնոգենեզի զոնայում չէին կարող չտեղավորվել հայկական էթնոսի զարգացումը պայմանավորող մշակույթի այնպիսի կենտրոններ, ինչպիսիք էին Վանը, Արմավիրը, Երվանդաշատը, որտեղ ձևավորվել էին համապատասխան պասիոնարային դաշտեր: Դրանք գտնվում են ակտիվ խզվածքների առնվազն երկու համակարգերի հատման շրջանում [13]: Պասիոնարային ցնցման ժամանակը պայմանավորված էր արեգակնային–տիեզերական ճառագայթման 100–150-ամյա ակտիվացմամբ, որի արդյունքում էլ ձևավորվեցին համապատասխան պասիոնարային դաշտերը, հետագայում նաև հայկական էթնոսը: Եվ միայն ակտիվ խզվածքների 3 համակարգերի հանգույցի վրա հիմնադրված Արտաշատ քաղաքը սկիզբ դրեց պասիոնարային նոր դաշտի առաջացմանը, ինչը պայմանանավորված էր էթնիկական ու ազգային կազմի զգալի բազմազանությամբ և մեծ խտությամբ, ինչպես նաև բնակչության վրա այդ խզվածքների ինտենսիվ հոգեպաթոգեն ներգործությամբ: Արտաշատի առանձնահատուկ երկրաբանական դիրքը զգալի չափով կանխորոշում էր նրա պասիոնարային առանձնահատ-

կությունը: Քիչ են այնպիսի քաղաքները, որոնք ի սկզբանե ունեցել են բազմազան «մարդկային նյութի» այդպիսի բարձր համակենտրոնացում և խտություն: Այդ պատճառով էլ ժամանակային առումով նմանատիպ քաղաքների պասիոնարային դաշտերի որոշիչ դերի վարկածը, ըստ ամենայնի, հավանական է:

Ըստ Լ.Ն. Գումիլյովի, պասիոնարային ցնցումից հետո անհրաժեշտ է ոչ պակաս, քան 300 տարի, որպեսզի էթնոսի ձևավորման և զարգացման համար ստեղծվեն նպաստավոր պայմաններ: Հենց Արմավիրը, Երվանդաշատը և նրանց նմանակները հանդիսացան այն կենտրոնները, որոնք կարևոր դեր կատարեցին էթնոսի կայունացման գործում: Խորքային խզվածքների հանգույցներում էթնիկական սուբստրատի առկայությունը և նրանով պայմանավորված պասիոնարային դաշտերը հիմք հանդիսացան Արտաշատում և նրան նման քաղաքներում էթնոսի կայացման մեջ որոշիչ հանդիսացող ակմատիկ փուլի ձևավորմանը մ.թ.ա. 4–2-րդ դարերում:

Քանի որ էթնոգենեզի ավելի հին պասիոնարային դաշտերը աստիճանաբար սպառում են իրենց էներգետիկ ներուժը, ապա դրանք էլ պայմանավորում են էթնոսների անցումը հետակմատիկ փուլերին՝ բեկումնային, իներցիոն, անկումային, վերականգման (ռեգեներացիա), գոմեոստազի: Առաջին երեք փուլերի ընթացքում, որոնք տևել են մ.թ.ա. 1-ին դարից մինչև մ.թ. 7-րդ դարը, Արտաշատը, Դվինը և ժամանակային առումով նրանց նմանակները նույնպես սպառեցին իրենց էներգետիկ ներուժը: Միայն 9–11-րդ դարերում Բագրատունիների և 11–14-րդ դարերում Կիլիկիայում Ռուբինյանների կողմից վերականգնված հայկական պետություններում 3 խորքային խզվածքների հանգույցներում հիմնադրված Անի, Կարս, Սիս, Աղանա, Այաս, Տարսոն և այլ քաղաքներում ստեղծված հզոր պասիոնարային դաշտերը, հավանաբար, հնարավորություն տվեցին հայկական էթնոսին անցնել վերականգնման փուլ:

Ընդհանուր առմամբ նկատվում է հետևյալ օրինաչափությունը. էթնոգենեզի ավելի ուշ փուլերում պասիոնարային դաշտերի ակտիվության շրջանները կենտրոնական մասերից աստիճանաբար տեղափոխվում են էթնոսի զբաղեցրած տարածքի եզրամասերը: Հայկական էթնոսի համար նման դեր են կատարել Շիրակի, Սյունիքի, Վասպուրականի քաղաքները: Ներկայումս ամենաբարձր պասիոնարային դաշտ ունեցող տարածաշրջանը հանդիսանում է Արցախը: Վերոհիշյալ տարածքները էթնիկական սուբստրատի տարածաժամանակային ծագման ու էվոլյուցիայի, կազմի, կառուցվածքի տեսակետից թույլ են ուսումնասիրված: Ծագող հարցերի վերջնական պատասխանը կարելի է ստանալ միայն պատմահնաբանական և երկրատիեզերական համալիր հետազոտությունների արդյունքում: Դրանց համար հիմք կարող են ծառայել տեղանքի ակտիվ խզվածքների քարտեզները: Միայն ակտիվ խզվածքների և խոշոր քաղաքների կապերի բնույթի բացահայտումը, հաշվի առնելով դրանց զարգացման պատմությունն ու բնության մասին տվյալները և երկրատիեզերական ազդեցության գործոնները, հնարավորություն կտա կատարել տարածքի գիտական շրջանացում և վերծանել էթնոգենեզի զոնաներն ու պասիոնարային դաշտերը:

Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոն *Ստացվել է 06.02.2004*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Лобацкая Р.М., Кофф Г.Л.** Разломы литосферы и чрезвычайные ситуации. М.: Изд-во Российского экологического федерального информационного агенства, 1997.
2. **Дубров А.П.** Земное излучение и здоровье человека (геопатия и биолокация). М.: Аргументы и факты, 1992.
3. **Михайлова А.** Геопатогенные зоны – тайные энергии Земли. Альманах по истории тайных наук. М.: Гермес, 1991.
4. Биолокация. Лозоходство. Пермь: Полиграфист, 1993.
5. **Гумилев Л.Н.** Этногенез и биосфера Земли. М.: изд-во Тоо «Мишель и К», 1993.
6. **Павлыгиина Р.А.** – Журнал высшей нервной деятельности, 1990, т. 40, № 6.
7. **Иванов П.М.** – Вестник РАН, 1996, № 5.
8. **Ջահուկյան Գ.Բ.** – Լեզու և լեզվաբանություն, 2003, № 1:
9. **Գազինյան Ռ.Խ.** Հայ ժողովրդի էթնոգենեզը և էկոհամակարգերի փոփոխությունները պատմական ժամանակաշրջանում: Աշխարհագրություն-99. Եր., 1999:
10. **Вернадский Б.И.** Химическое строение биосферы Земли и ее окружение. М.: Изд-во АН СССР, 1965.
11. **Морозов Г.В.** Глобальные изменения природы, космические катастрофы, климатические изменения и мониторинг по определению возможных землетрясений. М., 1991.
12. **Эдди Дж.** – Успехи физических наук, 1978, т. 125, вып. 2.
13. **Սարգսյան Հ.Հ., Ավանեսյան Ա.Ս., Ավանեսյան Մ.Ա.** – ԵՊՀ Գիտական տեղեկագիր, 2001, № 3:

Р. Х. ГАГИНЯН

ПОГРАНИЧНЫЕ ПОЯСА ЛИТОСФЕРНЫХ ПЛИТ КАК СТИМУЛ ФОРМИРОВАНИЯ ЗОН ЭТНОГЕНЕЗА И ПОЛЕЙ ПАССИОНАРНОСТИ (НА ПРИМЕРЕ АРМЯНСКОГО НАГОРЬЯ)

Резюме

Анализируется процесс формирования армянского этноса и государственности. Доказывается, что на него влияют геологические факторы, которые обусловливают целостность и устойчивость этноса. Делается вывод, что на формирование зон этногенеза и полей пассионарности, кроме космического фактора, влияют также активные разломы разного порядка и их узлы, находящиеся на пограничных поясах литосферных плит.

R. Kh. GAGINYAN

FRONTIER BELTS OF LITHOSPHERE PLATES AS A STIMULUS OF FORMING ETHNOGENESIS ZONES AND PASSIONATE ATMOSPHERE (ON THE MODEL OF THE ARMENIAN HIGHLAND)

Summary

Analysing the process of forming the Armenian ethnos and State system it is proved that the geological factors influence them which cause the integrity and stability of the ethnos. We come to the conclusion that besides cosmic factors the active breakings of different order and their junctions, which are on the frontier belts of lithosphere plates also influence the forming of ethnogenesis zones and passionate atmosphere.